ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«30» հունվար 2019թ. No 205 - Ա

30 JAN 2019

ՀԱՅԱՍՏԱՆԻ «ՆՕԿԻ Հ/Ձ ՍՊԸ, ՆՈՐ-ԽԱՐԲԵՐԴ, ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ» ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ «ԿԱՐԴԻՈ-ԱՍ, ԱՑԵՏԻԼՍԱԼԻՑԻԼԱԹԹՈՒ, ԴԵՂԱՀԱՏԵՐ, 100ՄԳ, ԲԼԻՍՏԵՐՈՒՄ (20/2Х10/)» ԴԵՂԻ 118, 218, 317 ՍԵՐԻԱՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԵՏՀԱՎԱՔԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի «20» ենթակետը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2012 թվականի փետրվարի 24-ի N303-Ա հրամանով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետությունում դեղերի, դեղանյութերի, բժշկական նշանակության այլ արտադրանքի և կենսակտիվ սննդային հավելումների շրջանառությունը դադարեցնելու և շրջանառությունից հանելու (հետկանչի) կարգը, հետկանչի մասին ահազանգի ծանուցման և հետ կանչի իրականացման վերաբերյալ տեղեկատվության ձևերը հաստատելու մասին» կարգը, «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի 2018 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 0114194218 եզրակացությունը, համաձայն որի «Կարդիո-ԱՍ, ացետիլսալիցիլաթթու, դեղահատեր, 100մգ, բլիստերում (20/2x10/)»՝ 118, 218, 317 սերիաների դեղը ձեռքի մեջ փշրվում է, ունի տհաճ համ: Դեղի նշված սերիաների լաբորատոր փորձաքննությամբ պարզվել է, որ չեն համապատասխանում նկարագրություն կետով՝ անհարթ մակերեսով, արտահայտված քացախաթթվի հոտով, բլիստերում որոշ դեղահատերի վրա «ASPIRIN100» դրվագրվածի բացակայությամբ, իսկ 317 սերիան չի համապատասխանում նաև ացետիլսալիցիլաթթվի քանակ կետով՝ 95մգ/դհ-ի փոխարեն 86,3 մգ/դհ-84,67 մգ/դհ է:

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Դեղերի մեծածախ իրացմամբ զբաղվող, դեղատնային գործունեություն իրականացող, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող

իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին՝ դադարեցնել Հայաստանի «ՆՕԿԻ Հ/Ձ ՍՊԸ, Նոր-Խարբերդ, Արարատի մարզ» դեղագործական ընկերության արտադրության «Կարդիո-ԱՍ, ացետիլսալիցիլաթթու, դեղահատեր, 100մգ, բլիստերում (20/2x10/)» դեղի 118, 218, 317 սերիաների շրջանառությունը Հայաստանի Հանրապետությունում:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին՝

1) ապահովել մասնագիտական և պաշտոնական զանգվածային լրատվության միջոցներում համապատասխան տեղեկատվության հրապարակումը:

3. «ՆՕԿԻ» Հ/Ձ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենին՝

1) Ապահովել սույն հրամանի առաջին կետում նշված «Կարդիո-ԱՍ, ացետիլսալիցիլաթթու, դեղահատեր, 100մգ, բլիստերում (20/2x10/)» դեղի 118, 218, 317 սերիաների շրջանառության դադարեցումը Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում և հետ հավաքումը՝ այդ մասին տեղեկատվություն տրամադրելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը:

4. «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի ժ/պ Լ.Մելիքյանին՝

1) սահմանված կարգով ապահովել հետհավաքման գործընթացի համակարգումը և արդյունքների մասին տեղեկացնել ՀՀ առողջապահության նախարարություն:

5. ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի քարտուղարության պետ Զ. Դարբինյանին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի օրինակի հանձնումը սույն վարչական ակտի հասցեատերերին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

30.01.2019

X

VERIFIED OCSP 30.01.2019 12:50:09 GMT+4

Signed by: NANU5HYAN LENA 5114750164